ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» Դեկտեմբերի 2015թ. N 1-ա(Հ)

Լ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետի (կոդ՝ 30-3.2-149) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 13-ի եզրակացությունը և Լ. Մանուկյանի դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Լուսինե Ռաֆիկի Մանուկյանին 2015 թվականի հունվարի 14-ից՝ երեք ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետի (կոդ՝ 30-3.2-149) պաշտոնում՝ լուծելով քարտուղարության ընդհանուր և արձանագրային բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 30-3.2-61) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված N 4 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ